# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի << Լեռնամերձի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի երաժշտություն /1 դասաժամ/, կերպարվեստ /2 դասաժամ/, ինֆորմատիկա /3 դասաժամ/, թվային գրագիտություն և համակարգչային գիտություն/2 դասաժամ/ և հասարակագիտություն /2 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկան են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի հունվարի 15-ից մինչև հունվարի 26-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի հունվարի 30-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի << Լեռնամերձի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում.հասցեն՝ Արմավիրի մարզ, գ Լեռնամերձ Արագածի 26 :

Տեղեկությունների համար զանգահարել (093) 81 44 14 հեռախոսահամարով:

*<< Լեռնամերձի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենություն*